ՆԻՒԹԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1825. Մեր ձեռքն ընկած մի ցուցակից իմանում ենք, որ Տփխիսի Հայոց «Մայր դպրոցում» աշակերտների թիւը վերջին դասարանում 1825 թուի դեկտեմբեր ամսին եղել է 69։

—

1831 ՆՈՅԵՄԲԵՐ 7. Մինաս արքեպիսկոպոսի և Արզուրեանց Ստեփաննոս վարդապետի Տփխիսի աւագ քահանաներին գրած առաջադրութիւնից տեղեկանում ենք, որ Իշխան Աղամալ Խօճայ Մինասեանցը ընծայել է Տփխիսի Հայոց ուսումնարանին 87 հատոր ուսումնական գրքեր, այն է՝ ընդհ. պատմ. Կայդանովի, աշխարհագրական մի թուղթ հնոց աշխարհի, աշխարհագրութիւն Նաբօլսկիի, աշխ. հինգ մասանց աշխարհի, թուաբանութիւն և բոլորը մի գլոցով յանձնել է ուսումնարանի «ազգասէր կօմիտէին». այդ մասին Վրաստանի հոգևոր կառավարութիւնը պատուիրում է աւագ քահանաներին յայտնել եկեղեցիներում ի լուր բարեպաշտ ժողովրդեան, նոյնպիսի բարեգործութեան նախանձով վառուելու համար։

—

1839 ԱՊՐԻԼ 28. Տփխիսի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի առաջադրութիւնից երևում է, որ Հոգևոր ճեմարանի ստորին դասատանց ուսուցիչների մէջ կարևոր փոփոխութիւններ անելուց յետոյ՝ տարւոյս յունուարի 1-ից ուսուցչական պաշտօն են վարել հետևեալները.—

1, Վերատեսուչ Յովսէփ Օրբէլի որ և դասատու Թարգմանութեան.

2, Ճարտասանութեան, հայկաբանութեան և քրիստոնէական վարդապետութեան՝ Յակոբ Կարինեանց.

3, Ընդհանուր պատմութեան, Թուաբանութեան և ռուսաց աշխարհագրութեան՝ Պղատոն Էսէլիանեանց.

4, Ռուսաց լեզուի քերականութեան՝ Գաբրիէլ Երեցփոխեանց.

5, Հայոց պատմութեան՝ Յարութիւն Շահնազարեանց.

6, Թուաբանութեան առաջին մասանց, քերականութեան և աշխարհագրութեան ռուսաց լեզուի՝ Գէորգ Գասպարեանց.

7, Հայ լեզուի քերականութեան Գրիգոր Տէր-Յովհաննիսեանց.

8, Վայելչագրութեան և ռուսաց լեզուի քերականութեան Կապիտան Պաւլինսկի.

9, Վայելչագրութեան և հայ քերականութեան ներածութեան՝ Դաւիթ Տէր-Աղէքսանդրեանց.

10, Հասարակ ընթերցման ռուսաց՝ Կարապետ Զոհրաբեանց.

11, Հայ լեզուի հասարակ ընթերցման՝ Յովհաննէս Մնացականեանց.

12, Քերականութեան վարժութեան, եկեղեցական դպրութեանց յառաջին դասատան հոգևորականաց, տիրացու Կարապետ Մասինեանց.

Դոցանից 8-դ և 12-դ ուսուցիչները նոյն թ. Ապրիլից արձակուել են պաշտօնից։

Մնացածներին ամսական տրւում էր ռուճիկ 162 ռուբլի։

—

1839, ՅՈՒԼԻՍ 28. Տփխիսի կոնսիստորիայի կազմած մի օրագրից երևում է, որ Տփխիսի Հայոց հոգևոր ճեմարանի աշակերտներից, ուսելի չափահասներն ու յառաջադէմ-

ները ստանալով աւագ սարկաւագութիւն, ուրար և չորս աստիճան, բաժանուած են եղել քաղաքի բոլոր եկեղեցիներում սպասաւորելու, որոնք, հոգևոր իշխանութեան սահմանած չափով, ստանում էին եկեղեցական արդիւնքի մի մասը իբրև ապրուստի միջոց։

—

1850 ՓԵՏՐՈՒԱՐ 3. Ներքին գործոց նախարար գրաֆ Ա. Պէրովսկին № 353 գրութեամբ ծանուցանում Ներսէս Ե. կաթուղիկոսին կայսերական հրամանը, որի մասին Հայրապետը նոյն թուի յուլիսի 3-ի կոնդակով տեղեկութիւն է տալիս Տփխիսի կոնսիստորին, թէ բոլոր դպրոցների կրօնուսոյցները, սկսած բարձրագունից մինչև ժողովրդական դպրոցները, պէտք է նշանակուին ուսեալ և վարք ու բարքով օրինակելի անձինքներից և ընդունակ՝ աշակերտների սրտի և հոգու մէջ Աստուծոյ երկիւղը և քրիստոնէական ամեն պարտականութիւնները տպաւորելու։

—

1851. Ներսիսեան Դպրոցի մուտքու ծախքը 1851 թուին։

Մուտք. 5504 ռ. $62^1/_2$ կ.

Ծախք. 4439 ռ. $41^1/_2$ կ.

Մնացորդ 1065 ռ. $21^1/_2$ կ.

Այս ծախքից արուածէ՝ ուսուցիչներին տեսչին և ծառ. 1767—$52^1/_2$, որդեգիրների պահպանութեան 1497 ռ. 3 կ. մնացածն էլ նորոգութիւնների, շինութիւնների, քննութիւնների ժամանակ պարգև, գրքերի, տպարանի ևն։

—

1854 ՄԱՐՏ 12. Տփխիսի Հայոց Հոգևոր Դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է Վրաստանի կոնսիստորին, թէ Դպրոցի աշակերտներից 45 հոգի, որոնցից 15 ուրարակիր և մէկը սարկաւագ, ուսումնառութիւնից ազատ ժամանակ ծառայում են քաղաքիս եկեղեցիներում։

—

1858 Թուին Ցփխիսի դպրոցների թիւը.

1, Ծխական 6, 9 ուսուցիչներով և 208 ուսանողներով։

2, Ճեմարան 1.

—

1861 ԱՊՐԻԼ 20. Սանահնի հայոց հոգևոր ուսումնարանը 1861 թուին ունեցել է 3 կարգ. առաջինում 7, երկրորդում 8 և երրորդում 6 աշակերտներով։

Ուսանդուել է ա. բաժնում Հարատևանութիւն, Զամչեան քերականութիւն ա. մ., ասատուածաշնչի նկարագրական մասը, շարական, ազգային պատմութիւն և թուաբանութիւն ըստ մասին։

բ. Բաժնում՝ հին և նոր կտակարան, նկարագրական մաքով, երաժշտական վարժութիւն, եօթն խորհուրդ, վայելչագրութիւն։

գ. Բաժնում՝ պատարան թարգմանութեամբ, ժամագիրք, սաղմոս և պրբմենարան։

Վանահայր և ուսուցիչ եղել է Աւետիք վարդապետ Տէր-Գրիգորեանց։